

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏ

ԾԱՂԻԿՆԵՐԸ ԵՒ ՎԱՐՍԱՆԴԱ-ՊՏՂԱՅԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Զոյգ ծաղիկների մոտիվը շատ է տարածում և նաև ճարտարապետությունում մեջ, որի բազմաթիվ օրինակներն ինչպես Զուարթնոցի զոյգ որմնասյուների խոյակների քանդակները, Այս ծաղիկների առանձնատեսակներն այն է, որ նրանք ցոյց են տալիս ուղղահայե կտրվածքով, կողքից⁽¹⁾:

Զոյգ ծաղիկների մոտիվն կենցաղում համապատասխանում է, օրինակ, այն սովորությունը, որի համաձայն հարսանիքի ժամանակ հարսին ու փեսային կոչում են «երկու ծաղիկ» և խմում նրանց աճման ու պտղաբերության կենացը:

Զոյգ ծաղիկի մոտիվը շատ տարածում է եղել նաև քրիստոնեության սկզբնական շրջանի քանդակագործական յուշարձանների վրայ: Այդպիսիներից են Ագարակի⁽²⁾, Այրամանի⁽³⁾, Վանք-Խարաբայի⁽⁴⁾ և այլ կոթողների վրայ պատկերված ծաղիկները, որոնք թիրամացաբար համարվել են արժանավիճակի տերեր: Ծարտարապետ Թ. Թորամանյանը, քննելով Այրամանի քարակոթողի զարդերը, գրում է. «կոթողի ստորին մասն իր արժանավիճակի տերերի յուշահուշում է պատկերված աղվեսներից և ցոյց տալիս...»⁽⁵⁾: Ինչպես տեսնում ենք, մոտիվի ոչ ճիշդ բացատրությունն իր հետ քաշ է

տալիս նաև այդ մոտիվի օտարամուտ լինելու սխալ տեսակետը:

Նշենք միայն, որ զոյգ ծաղիկի մոտիվն էլ, ինչպես բոլոր զարդերը, տարբեր նիւթերի, տարբեր ժամանակների, տարբեր վարպետների և այլ տարբեր պայմանների պատճառով, նոյնությամբ չի պատկերվում, այլ տալիս է նոյն մոտիվի բազմաթիվ տարատեսակներ:

Մաղիկը, որպես աճման և պտղաբերության երևույթներն ընդհանրացնող հասկացություն, առօրեայ կեանքում ևս հսկայական տարածում է գտել: Երբ երիտասարդները հասունացել են ամուսնության համար, նրանց համեմատել են արդեն ծաղկելու պատրաստ բոյսերի և ծառերի հետ: Այս տեսակետից առանձին ուշադրություն արժանի են, օրինակ, Համբարձման տոներին և հարսանիքների ժամանակ տեղի ունեցող մի շարք արարողությունները⁽⁶⁾:

Համբարձման տոնակատարությունները տեղի էին ունենում զարնանք՝ բնության զարթոնքի, բուսական աշխարհի ծաղկման բուռն պահին: Երիտասարդ աղջիկները, բազմադարեայ սովորությունների համաձայն, ցանկանում էին գուշակել իրենց ամուսնության հետ կապված հարցերը: Եւ ահա նրանք դրա համար, ամենից առաջ, զրմում էին ծաղիկներին: Նրանք փնջում

(1) Թ. Թորամանյան, Նիւթեր Հայկական ճարտարապետության Պատմություն, I, Երևան, 1942, էջ 260:

(2) Բ. Առաքելյան, Հայկական Պատկերաքանդակներ IV-VII դարերում, Երևան, 1949, նկ. 18:

(3) Նոյն, նկ. 19:

(4) Նոյն, նկ. 27:

(5) Թ. Թորամանյան, Նիւթեր Հայկական ճարտարապետության Պատմություն, I, Երևան, 1942, էջ 23 - 24:

(6) Նոյն մտածողությունն իր հետքն է դրել նաև երազների մեկնության հին պրակտիկայի վրայ. այսպես, օրինակ, Աջ 695 ձեռագիր երազահանում կարգում ենք. «Ծաղիկ տեսանելն դարձնում է ծառ պտղով տեսանելն» մեծ բարի է... կանանչ և ծաղիկ տեսանելն բարի է... Զամենայն ծաղկանց տեսանելն բարի է և այլն:

էին տարբեր սարերից ընտիր ծաղիկներ, զետեղում 7 աղբիւրից առնուած ջրով լեցուն սափորի մէջ, «աստղունք դնում» և ապա կատարում վիճակահանութեան արարողութիւնները: Այդտեղ, իւրաքանչիւր մասնակցողի բախտը գուշակում էր ժողովրդական մի խաղիկով, որի կրկնակն էր.

Ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն:

Հէնց այս կրկնակը ցոյց է տալիս, որ խաղի և արարողութեան կենտրոնական գաղափարը ծաղկի գաղափարն է եղել: Այդ ծաղկի տակ հասկացուել է ոչ թէ բուսական այս կամ այն տեսակի ծաղիկը, այլ ընդհանրապէս ծաղիկը, որն իր մէջ ամփոփել է աճման և պտղաբերութեան գաղափարը: «Ջան գիւլումի» գովքերը ընդհանրացում - ծաղկի ամենահոյակապ գովքերն են, որոնք կերտել է ժողովուրդը և յատկապէս կանացի սեռը՝ դարեր շարունակ:

Ինքնին հասկանալի է, որ «Ջան գիւլումի» ծաղկամանները, այդքան խորհրդաւոր արարողութիւնների շնորհիւ, պիտի արժանանային յատուկ ուշադրութեան: Չէ՞ որ նրանց մէջ էին ամփոփուած ե՛ւ ջուրը, ե՛ւ ծաղիկը, ե՛ւ այն նշանները (մատանի, ականջի օղ, յուլունք, դրամ, դանակ, և այլն)՝ որոնք գցում էին գուշակութեանը մասնակցող աղջիկները: Դա հէնց ինքը պտղաբերութեան մի սիմվոլ է եղել, որը գլուխներից բարձր բռնած, պարել են աղջիկները վիճակահանութեան ժամանակ և միշտ հսկել, որ երիտասարդները չփախցնեն այն: Ահա նաև այդպիսի շատ անօթների նկարների ենք հանդիպում մեր զարդարուեստում, որոնք երևան են գալիս բազմազան ձևերով:

Ծաղիկները հսկայական տեղ էին զբաղում նաև հարսանեկան արարողութիւններում: Յիշենք յատկապէս «Ծաղկոցները»՝ դրանք հարսանեկան երգեր են, որոնց մէջ գովերգւում են, հիմնականում, հարսն ու փեսան: Հէնց ինքը՝ այդ երգերի «Ծաղկոց» կոչումը ցոյց է տալիս, որ, իրօք, այդ երգերում ծաղիկներն են գրաւում ամենագլխաւոր տեղը: Այստեղ էլ սակայն լոկ բուսաբանական ծաղիկների հետ չէ որ գործ է ունեցել ժողովուրդը: Նոյն ընդ-

հանրացում - ծաղկի մօտիվն է, որ փառաբանուել է հարսանեկան հանդէսներում՝ այնքան զոդտրիկ և այնքան գունագեղ երգերի միջոցով:

Հարսանիքաւորները մերթ հարսին, մերթ փեսային, մերթ էլ երկուսին միասին գիմելով, համեմատել են նրանց իրենց երկրի ամենաշքեղ ծաղիկների հետ ու ցանկացել, որ նրանք էլ ծաղկեն այդ ծաղիկների նման: Ահա մի հատուած համապատասխան երգերից.

Մեր քաղաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց(*).
Ծաղիկն ինչեմի՞ պիտէր ծաղկունաց.
Ծաղիկ պալատն պիտէր ծաղկունաց.
Որ փրբեր ծառն ու ծաղիկ հէտ իրաց(**):

Այս նոյն ձևով գովերգւում են ձնծաղիկը, անթառամը, նունենին, նունուֆարը, վարդենին, և այլն:

Համարձման, հարսանեկան, ծաղարդարի և ժողովրդական ուրիշ հանդէսներում ծաղիկները փառաբանուել են նաև այլ ձևերով: Գունագեղ ու բուրուժնաւէտ ծաղիկներից պատրաստուած պսակներով պըճնել են հարսի, ծաղկամօր, «Նուրինի» և այլոց գլուխները: Նման սովորութիւններ եղել են նաև ուրիշ ժողովուրդների մօտ: Այս երևոյթները նոյնպէս իրենց հետքը թողել են զարդարուեստում՝ կապուելով աւելի բարդ հասկացողութիւնների հետ: Նկարուել են թռչնամարմին կանայք (գրանց էութիւնը կը բացատրուի ստորև), որոնց գլուխն ամբողջովին առնուած է ծաղկապսակի մէջ: Այդ կնոջ գլխի ծաղկապսակից բուսել են պտղաբերութեան վարսանդապտղային սիմվոլները:

Ըստ էութեան, այստեղ գործ ունենք ոչ թէ կենդանական, այլ բուսա-կենդանական մօտիվի հետ, որտեղ բոյսն ու կենդանին երևան են գալիս որպէս օրգանական ամբողջութիւն և արտայայտում ընդհանրապէս բուսա-կենդանական աշխարհների պտղաբերութեան գաղափարը՝ ծաղկի ու վարսանդապտղային օրգանների միջոցով:

Մարդկանց գլխին դրուած ծաղկէ պսակները, դեռ շատ հին ժամանակներից սկսած,

(*) Այս տողը կրկնուում է երեք անգամ:

(**) Մ. Միսնասարեանց, Քնար Հայկական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 145:

պիտի երևան գային նաև զլիսարկներին հետ, ամրացուէին նրանց վրայ և ի վերջոյ փոխարինուէին ծաղկային զարդերով: Այս տեսակէտից արժանի են ուշադրութեան հին ասորւածութիւնների, թագաւորների և ուրիշների ծաղկակիր թագերը: Այդպիսիններից է, օրինակ, Թոփրակ-Կալէուս գլուխը, ուրարտական ծագում ունեցող մի մարդագլուխ ասիւծի արձանի թագը, որի վրայ պատկերուած են ծաղիկներ: Տոտեմական գաղափարների մնացուկներ կրող այդ արձանը, իր զիցաբանական առումով, շատ աւելի հին ժամանակների հետ է առնչուում, քան ուրարտական շրջանը: Նրա թագի վրայ գտնուող ծաղկազարդերն էլ, իրենց նախնական առումով, ոչ թէ բնական ծաղիկների գեղարուեստական վերարտադրութիւն են, այլ պողաբերութեան հետ կապուող հասկացողութիւնների արտայայտութիւն: Մադիկը, որպէս պողաբերութեան սիմվոլ, աչքի ընկնող տեղ է գրաւում նաև այդ արձանի աջ կրծքին, ուսի մօտ:

Երբեմնի ծաղկակիր թագերի մասին մեծարժէք վկայութիւնների ենք հանդիպում նաև հին եգիպտական յուշարձանների վրայ: Այսպէս, օրինակ, Սախուր փարաւոնի տաճարում (XXVI դ. ն. մ. թ.) եգիպտական պողաբերութեան խապի աստուածութիւնը պատկերուած է մի այդպիսի թագով, որն աւելի շատ ծաղկաման է յիշեցնում, քան թագ:

Այս օրինակները համոզիչ կերպով ցոյց են տալիս, որ ծաղկային մոտիվները թագերի վրայ երևան են գալիս ոչ թէ որպէս ինքնանպատակ կամ գեղեցկացնող զարդեր, այլ որպէս պողաբերութեան սիմվոլներ, որոնք յետագայում աստիճանաբար կորցրել են իրենց այդ նշանակութիւնը:

Նման ծաղիկներով են զարդարուած նաև հայկական հին թագաւորների թագերը: Յիշենք Տիգրան Բ-ի պատկերը՝ դրամների վրայ, որտեղ ծաղիկը գտնուում է թոշնային ծնող-զոյգի միջև և նորից արտայայտում է ընդհանրապէս պողաբերութեան իմաստը^(*):

Մօղկազարդերը, որպէս պողաբերու-

թեան սիմվոլներ, միաժամանակ որպէս նաև, ըստ հին պատկերացումների, չարահալած ոյժեր, մարդկանց հագուստների զարդերից, շէնքերից ու կահ-կարասիքից բացի, օգտագործուել են նաև անասունների համար: Նրանցով զարդարուել են ոչ միայն գոմերը, լծասարքը, մսուրները, թամբերը, և այլն, այլև պատրաստուել են յատուկ կախիչներ, որոնք կախուել են անասունների պարանոցներից, ճակատներից:

Կարելի է դեռ շատ օրինակներ բերել՝ ցոյց տալու, թէ ինչպիսի հսկայական տեղ է գրաւել ծաղկի մոտիվը զարդարուեստում և ընդհանրապէս առօրեայ կեանքում, կենցաղում, հին պատկերացումների մէջ, և այլն: Բայց այս քանն էլ արդէն բաւական է այդ երևոյթը նկատելու համար և համոզուելու, որ այդ բոլոր դէպքերում էլ ծաղկի համապարփակ մոտիվը ունեցել է գաղափարական այնպիսի իմաստալից բովանդակութիւն, ինչպիսին է պողաբերութիւնը:

Ահա կենսականօրէն այնքան մեծ նշանակութիւն ունեցող այդ հարցն ընդգծելու համար է, որ զարդարուեստը մշակել է ուճաւորուած և ընդհանրացնող ծաղիկների մոտիվները: Այդ երևոյթի շնորհիւ է, որ ոճաւորուած ծաղիկները հեռանալով բնական, կոնկրետ ծաղիկների մանրամասնութիւններից, յետագայում, նրանց նախկին բովանդակութեան մոռացման պատճառով, դիտուել են որպէս սովորական, անբովանդակ զարդեր: Իսկ աւելի ուշ, երբ մասնագէտները փորձել են ուսումնասիրել այդ զարդերի իմաստը, ապա նրանք յանգել են ոչ ճիշդ եզրակացութիւնների: Այս տեսակէտից աչքի է ընկնում յատկապէս բուրժուական տեսարանների առաջ քաշած և զարգացրած այն կարծիքը, որի համաձայն ոճաւորուած ծաղիկները դիտուել են որպէս արևի սիմվոլներ և կապուել արևի պաշտամունքի հետ: Երբեմն էլ այդ զարդերը բացատրուել են որպէս շրջագծեր և անիւներ, զարձիւղ, ի վերջոյ, նոյնացուելով արևի իմաստը ցոյց տուող նշանների հետ: Աւելի քիչ ոճաւորուած և համեմատաբար բնական տեսք ունեցող ծաղիկներն անգամ, յաճախ, դիտուել են որպէս արևի սիմվոլներ: Այս վերջինները երբեմն բա-

(*) Տե՛ս «Հայ Ժողովրդի Պատմութիւն», 1, Երևան, 1951, էջ 48-49ի միջև եղող ներդիր նկարը:

ՀԻՆ ԷԶԵՐ

ՎԱՍՆ ՍՈՒՏ ԵՒ ԱՆՑԱԻՈՐ ԱՇԽԱՐՀԻՍ

Արդ, ով եղբայր, եթէ կամիս որ յաղթես աշխարհի եւ ոչ ըմբռնիս ի պատրանս կենցաղոյս, դու խորհրդով միտ դիր եւ իմաստութեամբ բնեա եւ փորձեա եւ տեսանես թէ սնուողի է եւ անցաւոր կեանք մարդկան. որպէս զստուեր անցանէ եւ քան զերազ աներեւոյթ դառնայ: Զոր օրինակ եթէ մտանես ի տաճար գեղազորժ վայելուչ եւ վայելես տեսութեամբ, իսկ յորժամ ելանես անտի, թէպէտ դու եւ թէպէտ այն որ ոչ ետես. եւ դարձեալ կարօտանաս տեսանելոյ: Քանզի ոչ թէ յորժամ մեռանի մարդ՝ յայն ժամ զրկի յայս կենացս. այլ մինչդեռ կենդանի է՝ աւուրն փառքն յօրն ելանէ, եւ պահուն ի պահն:

Զի թէ կոչես գուսանս եւ լսես ծայնս ուրախութեան, երբ ծայնն յականջէդ կտրաւ, անցաւ ու գնաց, եւ դարձեալ կարօտ լինիս. թէպէտ դու՝ եւ թէպէտ այն որ ոչ լսեց բնաւ:

Եւ դարձեալ թէ տեսանես զքեզ յերազի թագաւոր եւ ծիաւոր, փառօք եւ պատուով. իսկ յորժամ զարթնուս ոչինչ ունիս ընդ քեզ, բայց միայն զայն որ յիշես՝ եթէ զայս ինչ տեսա ի յերազի:

Այսպէս յայգուէ մինչեւ ցերեկոյ՝ եթէ ուտես եւ թէ խմես եւ թէ ի բազմաց պաշտօն առնուս, եւ թէ դու զայլս ծառայես եւ պաշտես. իսկ ի հասանելն երեկոյին՝ էանց ամենայն եւ գնաց, եւ ի վաղիւն որպէս երազ թըւի, եւ դարձեալ կարօտ լինիս եւ քաղցեալ:

Զոր օրինակ եթէ ելանէ մարդ ընդ առաւօտն եւ երթա ի ճանապարհ մի, եւ տեսանէ բազում այգիս եւ դրախտս, մարգս եւ ծաղկունս, եւ անցեալ գնա, եւ հասանէ երեկոյին յօթեւանին՝ եւ ամենեւին ոչինչ ունի յայնցանէ ընդ իւր՝ բայց միայն զայն որ ասէ թէ զայս ինչ եւ զայն տեսի ի ճանապարհին:

Այսպէս եւ դու եթէ ի վաղունէ մինչեւ ցերեկոյ զամենայն երկրաւոր ուրախութիւնս վայելես. իսկ երեկոյին էանց ամենայն եւ դարձեալ կարօտ լինիս: Վասն այնորիկ ասէ մարգարէն. Որպէս յերազի ոք ուտէ եւ ըմպէ, եւ յորժամ զարթնու՝ ընդունայն էր ամենայն:

Այսպէս եւ ամենայն փառք մարդոյ, որպէս եւ հանդերձ մարդոյ, առ սակաւ սակաւ մաշի եւ հնանա. քանզի ծերանան ալիքն եւ պակասէ խելքն, թառամի գեղեց-

ցատրուել են նաեւ որպէս լոկ բնական ծաղիկների «գեղարուեստական» վերարտադրութիւն՝ առանց գաղափարական բովանդակութեան:

Արեւային տեսութիւնը խոր արմատներ է տարածել ինչպէս զարգարուեստի մօտիվների ուսումնասիրութեան, նոյնպէս եւ նրանց հետ կապուող շատ ուրիշ հարցերի նուիրուած աշխատանքների մէջ: Անշուշտ, արեւը իր մեծ տեղն ու գերը ունեցել է մարդկանց հին պատկերացումների մէջ, սակայն այդ

գերը երբեք էլ, ինչպէս բնութեան, նոյնպէս եւ մեր նախնիների գիտակցութեան մէջ, չի ծածկել ուրիշ կարեւոր եւ համազօր այնպիսի գործօնների գերը, ինչպիսիք են ջուրը, հողը, օդը: Արեւը երեւան է եկել նրանց հետ միասին:

Այս հարցն աւելի սպառիչ պատասխան է ստանալու ստորեւ՝ չորս էլէմենտներին նուիրուած էջերում. ուստի այստեղ բաւարարուենք այս քանով:

(Շարունակելի՝ 5) Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ